

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ «ԱՊԱԳԱՅ» ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳԻՐ ԱՐՄԵՆ - ՆՈՒՊԱՐ ՄԱՄՈՒՐՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ
ԲԱԶՄԱՄԵԱՅ ԽՄԲԱԳԻՐՆ «ԱՊԱԳԱՅ» ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹԻ,
ՏԻԱՐ ԱՐՄԵՆ - ՆՈՒՊԱՐ ՄԱՄՈՒՐԵԱՆ,
ՈՐ Ի ՍՈՆՐԷԱՆ, ԿԱՆԱԴԱ**

Ուրախութեան եւ հոգեւոր բերկրանքի առիթ է Մեզ համար Հայրապետական Մեր ողջոյններն ու ջերմ բարեմաղթանքները յղել Ձեզ, որ հեռաւոր Կանադայի հողում ջերմեռանդ եկեղեցասիրութեամբ ու հայրենաշինութեամբ, որպէս զիր ու գրականութեան անխոնջ մշակ, լծուած էք ի փար աշխարհի բնակեալ մեր զաւակաց լուսաւորելու պատուաբեր առաքելութեանը:

Կանադահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-պօլեբեանի միջոցով ծանօթ ենք խմբագրական 25-ամեայ Ձեր նուիրեալ գործունէութեանը, որ համախառնել էք հասարակական յարաբերութեանց ոլորտում բերած Ձեր մեծարժէք ծառայութիւններով:

Հայրենիք ու Եկեղեցի սրբազան գաղափարներով խանդավառ՝ Դուք Ձեր հոգու ջերմութիւնն ու սիրոյ կրակն էք դրոշմել նախանձաւոր հոգացողութեամբ խմբագրած «Ապագայ» շաբաթաթերթի էջերին, որ առ հայրենական աւանդներն ու սրբութիւնները հաւաքարմութեան հիմներգի է փոխակերպուել Կանադայի բարեպաշտ մեր զաւակաց հոգիներում:

Մեր «յոյսի ու յոյսի» հայրենեաց եւ Սրբազնաստուրբ մեր Եկեղեցոյ նկատմամբ Ձեր անկեղծաւոր սիրոյ ու նուիրումի բարձր գնահատանքով եւ ընդառաջ բարեջան

առաջնորդի խնդրանքին՝ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ

Ս. Սահակ - Ս. Մեսրոպ

շքանշանը:

Լուսաւորութիւնն ու խաւարամերժութիւնն էր փոխիլը Ս. Սահակ Հայրապետի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի, որոնց առաքելութեան «դալար մարգագետիններով» էք ընթանում նաեւ Դուք:

Աղօթքով առ Աստուած՝ կենաց արեւշապտութիւն եւ հայրենանուէր ծառայութեամբ նուաճուած երջանկութեան բազում առիթներ ենք մաղթում Ձեզ Ձեր օրհնեալ ճանապարհին:

Թող Երկնաւորն Աստուած հանապազ լոյս բաշխի Ձեզ՝ բեղմնաւոր գործունէութեամբ ու բիրտ յաջողութիւններով պսակազարդելով Ձեր կենաց ընթացքը՝ ի լուսաւորումն մրաց եւ հոգւոց հայարին զաւակաց:

Ողջ լերութ ի Տէր, գօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալք ի Մէջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս

ի 16 Մայիսի յամի Տեառն 2000

եւ ի թուին Հայոց ՌՆՄԹ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարս 36